ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 27.9.2007

COM (2007) 558 վերջնական

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Մեծահասակների Ուսումնառության Գործողության Պլան

Սովորելու համար երբեք ուշ չէ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Մեծահասակների Ուսումնառության Գործողության Պլան

Սովորելու համար երբեք ուշ չէ

1. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1997թ. երկրների և դրանց կառավարությունների ղեկավարները հաստատեցին Ամստերդամի Պայմանագրին ի պատասխան կայացրած որոշումը՝ *«օժանդակել գիտելիքի հնարավոր բարձրագույն մակարդակի զարգացմանը կրթություն մուտք գործելու լայն հնարավորության և դրա շարունակական կատարելագործման միջոցով»*[1]:

2000թ. Եվրոպական Խորհուրդը Լիսաբոնում սահմանեց ռազմավարական նպատակ Եվրոպայի համար՝ մինչև 2010թ. դառնալու ամենամրցունակ և դինամիկ գիտելիքահենք հասարակությունն աշխարհում: Լիսաբոնի օրակարգի առանցքային տարրը քաղաքացիների գիտելիքի և կարողությունների մեջ ողջ կյանքի ընթացքում ներդրումների միջոցով զբաղվածությունն ու սոցիալական ներգրավումը խթանելն էր:

Հանձնաժողովի 2001թ. զեկույցը՝ *Ցկյանս Ուսումնառության Եվրոպական Տարածքի Իրականացում*[2], ևս շեշտում էր Եվրոպական բոլոր քաղաքացիների ցկյանս ուսումնառության կարևորությունը: Հիմնական նկատառումներից մեկն այն էր, որ *ավանդական համակարգերը պետք է վերափոխվեն՝ դառնալու ավելի թափանցիկ ու ճկուն, որպեսզի ուսումնառուներն ունենան ուսումնառության անհատական ուղիներ՝ իրենց կարիքներին և հետաքրքրություններին համապատասխան, և, հետևաբար, օգուտ քաղեն տրված հնարավորություններից իրենց ողջ կյանքի ընթացքում:*

«Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի շրջանակներում առաջընթացի վերաբերյալ 2006թ. Համատեղ Միջանկյալ Զեկույցն ընդգծում էր, որ կյանքի ընթացքում բոլոր քաղաքացիները պետք է ձեռք բերեն և կատարելագործեն իրենց հմտությունները, և որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել սոցիալական բացառման վտանգ

---

1 Եվրահամայնքը հաստատող Պայմանագիր, http://europa.eu/eurlex/en/treaties/dat/C_2002325EN.003301.html

2 Եվրոպական Հանձնաժողովի Զեկույցը՝ Ցկյանս Ուսումնառության Եվրոպական Տարածքի իրականացում, http://ec.europa.eu/education/policies/lll/life/communication/com_en.pdf

ներկայացնող անձանց հատուկ կարիքներին: Մեծահասակների ուսումնառությունը /և՛ քանակական, և՛ որակական առումով/ ևս ունի առանցքային կարևորություն հմտությունների միջին և բարձր մակարդակ ունեցող մարդկանց կարողությունների զարգացման համար[3]:

Մեծահասակների ուսումնառության վերաբերյալ Հանձնաժողովի 2006թ. զեկույցը[4]՝ *Սովորելու համար երբեք ուշ չէ*[5], մեծ նշանակություն է տալիս մեծահասակների ուսումնառությանը՝ որպես ցկյանս ուսումնառության գլխավոր բաղադրիչ: Վերջինս քաղաքացիության ու կարողությունների զարգացման գործում ունի գլխավոր դերակատարություն:

Գործողության պլանը կենտրոնանում է թերի անդունակ մարդկանց վրա՝ նրանց գրաճանաչության ցածր մակարդակների, աշխատանքային անհամապատասխան հմտությունների և/կամ հասարակությանն ավելի լավ ինտեգրվելու հմտությունների պատճառով: Կախված տվյալ անդամ պետությունից՝ սա կարող է ներառել վերաբնակիչներին, տարեց մարդկանց, անընդունակ կանանց կամ անհատներին:

Պետք է նշել, որ բարձր որակի և մեծահասակների ուսումնառության մատչելի համակարգի կարիքն այլևս քննարկման ենթակա չէ՝ ելնելով այն մարտահրավերներից, որոնց Եվրոպան պետք է արձագանքի մոտակա տարիներին.

- Կրճատել ազգագրական փոփոխությունների հետևանքով առաջացած աշխատանքին վերաբերող թերությունները՝ բարձրացնելով հմտությունների մակարդակներն աշխատուժի ներսում և կատարելագործելով հմտությունների ցածր մակարդակ ունեցող աշխատակիցների հմտությունները /2006թ. 80 միլիոն/: Մեծահասակների ուսումնառությունը կարող է նպաստել դրա և՛ արագ, և՛ արդյունավետ իրագործմանը,
- Արձագանքել դպրոցը վաղ լքողների անփոփոխ մեծ թվաքանակի հիմնախնդրին[6] /2006թ. մոտ 7 միլիոն/՝ առաջարկելով երկրորդ հնարավորություն որևէ որակավորում չունեցող մեծահասակներին,

---

[3] Հանձնաժողովի զեկույցը Խորհրդին, Եվրոպական Կառավարությանը, Եվրոպական Տնտեսական և Սոցիալական Կոմիտեին և Տարածաշրջանների Կոմիտեին՝ Ընդառաջ դեպի ճկունության Ընդհանուր Սկզբունքներ, Ավելի շատ և ավելի լավ աշխատանքներ ճկունության և անվտանգության միջոցով, http://ec.europa.eu/employment_social/news/2007/jun/flexicurity_en.pdf

[4] Եվրոպական Հանձնաժողովի Զեկույցը՝ Սովորելու համար երբեք ուշ չէ, սահմանում է մեծահասակների ուսումնառությունը և նրանց կողմից հանձն առնված ուսումնառության բոլոր ձևաչափերը նախնական կրթությունն ու ուսուցումը թողնելուց հետո

[5] Եվրոպական Հանձնաժողովի Զեկույցը՝ Սովորելու համար երբեք ուշ չէ, COM(2006) 614, 23.10.2006, http://eur-lex.europa.eu/LexUriServ/site/en/com/2006/com2006_0614en01.pdf

[6] 2005թ. 6 միլիոն, Հանձնաժողովի Անձնակազմի Աշխատանքային Փաստաթուղթ «Քայլ առաջ դեպի Լիսաբոնի նպատակներ կրթության և ուսուցման ոլորտում, Ցուցիչների և նշաձողերի վրա հիմնված զեկույց, Զեկույց 2006», SEC (2006) 639

- Կրճատել աղքատության և սոցիալական բացառման անփոփոխ ցուցանիշը: Մեծահասակների ուսումնառությունը կարող է օգնել և՛ կատարելագործել մարդկանց հմտությունները, և՛ մղել նրանց դեպի ակտիվ քաղաքացիություն ու անհատական ինքնուրույնություն,
- Մեծացնել վերաբնակիչների ինտեգրումը հասարակությանը և աշխատաշուկային: Մեծահասակների ուսումնառությունն առաջարկում է շատ հարմար դասընթացներ՝ ներառյալ լեզվի ուսուցումը՝ նպաստելու ինտեգրման այս գործընթացին: Բացի այդ, հյուրընկալող երկրում մասնակցությունը մեծահասակների կրթությանը կարող է օգնել վերաբնակիչներին ապահովել այն որակավորումների վավերացմամբ և ճանաչմամբ, որոնք իրենք բերել են իրենց հետ,
- Մեծացնել մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը և, հատկապես, հաշվի առնել այն փաստը, որ 34 տարեկանից հետո մասնակցությունն անկում է ապրում: Եթե Եվրոպայում աշխատանքային միջին տարիքը բարձրանում է, ապա պետք է զուգահեռաբար մեծացնել տարեց աշխատակիցների մասնակցությունը մեծահասակների ուսումնառությանը:

Մեծահասակների ուսումնառության մեջ ներդրումների մեծացման կարիքը հատկապես անհրաժեշտ է դառնում նշածողային ցուցիչի վերջին արդյունքներից, որը վկայում է, որ մեծահասակների /25-64/ մասնակցությունը ցկյանս ուսումնառությանն այլևս չի աճում և 2006թ. այն նույնիսկ անկում է ապրել 9.6%-ով[7]:

Գործողության պլանը նպատակ ունի օգնել՝ ամրապնդելու մեծահասակների ուսումնառության հատվածը, որպեսզի հնարավոր լինի օգտագործել վերջինիս լիարժեք հնարավորությունները: Սա իր բնույթով բարդ հատված է՝ մատակարարների մեծ բազմազանությամբ, և վերաբերում է բոլոր տեսակի թիրախային խմբերին: Մեծահասակների ուսումնառության հատվածի խաչաձև բնույթն արդեն իսկ ճանաչվել է:

Սովորելու համար երբեք ուշ չէ զեկույցում գործողության պլանի ընդհանուր նպատակը հաստատված հինգ հիմնական գաղափարների իրագործումն է. հեռացնել մասնակցության արգելապատնեշը, մեծացնել տվյալ հատվածի որակն ու արդյունավետությունը, արագացնել վավերացման և ճանաչման գործընթացը, ապահովել բավարար ներդրումներ և մշտադիտարկել հատվածը:

[7] 2007թ. Առաջընթացի Նախնական Զեկույց

1.1 Խորհրդատվության գործընթացը

Սույն զեկույցը 2006թ. հրատարակված զեկույցին ի պատասխան ծավալած լայն խորհրդակցության արդյունքն է: 2007թ. առաջին կեսին Հանձնաժողովը խորհրդակցեց անդամ պետությունների հետ կրթության և զբաղվածության նախարարությունների ներկայացուցիչների, սոցիալական գործընկերների և մեծահասակների ուսումնառության ոչ հասարակական կազմակերպությունների չորս տարածաշրջանային հանդիպումների միջոցով /Ֆինլանդիայում, Գերմանիայում, Սլովենիայում և Պորտուգալիայում/:

Հիմնվելով 2006թ. զեկույցի հիմնական գաղափարների վրա, որպես յուրաքանչյուր տարածաշրջանային հանդիպման մի մաս, հյուրընկալ երկիրը ներկայացրեց լավագույն փորձի օրինակներ այն մասնակիցներին, ովքեր ցույց տվեցին.

- շահագրգիռ կողմերի ինտեգրացված մոտեցման արդյունքները,
- ինչպես օգնել հմտությունների ցածր մակարդակ ունեցող աշխատակիցներին ձեռք բերել առանցքային հմտություններ,
- ինչպես են մշակվում մեծահասակների ուսումնառության մասնակցության մեծացմանը վերաբերող քաղաքականություններն ու գործողությունները,
- ինչպես է իրականացվում ոչ ֆորմալ ուսումնառության արդյունքների ճանաչման և վավերացման համակարգը:

Լավագույն փորձի փոխանակումը, որը տեղի ունեցավ այս հանդիպումների ընթացքում, կարող է համարվել գործընթացի դրական առաջին արդյունք:

Հանձնաժողովն անդամ պետություններում օգտագործեց նաև ինֆորմալ եղանակը, որը կօգնի քաղաքականության որոշումներ կայացնողներից, սոցիալական գործընկերներից և ոչ հասարակական կազմակերպություններից ստանալ մեծահասակների ֆորմալ և ոչ ֆորմալ ուսումնառությանն առնչվող գործողության պլանի հետադարձ կապ[8]:

Անդամ պետությունների ներկայացուցիչներից բաղկացած փորձագետները, սոցիալական գործընկերները և միջազգային այնպիսի մարմինները, ինչպիսին UNESCO-ն է, հետագայում աջակցեցին Հանձնաժողովին՝ նախագծելու գործողության պլանը:

[8] Խորհրդակցության գործընթացում ներգրավված են եղել 27 անդամ պետություն, ԵՏՏ 3 երկիր և Թուրքիան:

2. ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ՀԻՄՔ Է ԴՆՈՒՄ

Լիսաբոնի նպատակներին հասնելու և ցկյանս ուսումնառություն ձեռք բերելու գործին մեծահասակների ուսումնառության հատվածը կարող է նպաստել ավելի արդյունավետ համակարգերի ստեղծման միջոցով, որոնց մեջ ներգրավված կլինեն շահագրգիռ բոլոր կողմերը: Սույն գործողության պլանից ակնկալվող արդյունքները նույնպես կախված են վերոնշյալ համակարգերի արդյունավետությունից:

Նկատելի է, որ յուրաքանչյուր անդամ պետություն մասնակցության, որակի, ֆինանսավորման և հատվածի զարգացման առումով սկսում է մշակման տարբեր մակարդակներից: Լավ նախաձեռնությունների բազմաթիվ օրինակներ կան, որոնք մշակվել են անդամ պետություններում ԵՄ աջակցությամբ, և մնացած անդամ պետությունները կարող են հետևել այդ օրինակին[9]:

Խորհրդակցության գործընթացը, այս ոլորտի ուսումնասիրության և հետազոտության փաստերը ցույց են տալիս, որ մեծահասակների կայուն և արդյունավետ ուսումնառության հատվածը բաղկացած է մի շարք գլխավոր տարրերից, որոնք սերտորեն միջկապակցված են: Այս տարրերն են.

- *<u>քաղաքականությունները</u>*, որոնք ընդունվում են՝ բավարարելու հասարակության և տնտեսության կարիքներն ու պահանջները,
- *<u>ղեկավարման</u>* կառուցվածքներ՝ ներառյալ մեծահասակների ուսումնառության համակարգի որակը, արդյունավետությունն ու հաշվետարությունը,
- *<u>մատուցման</u>* համակարգեր՝ ներառյալ ուսումնառության գործընթացները, ուսումնառության օժանդակությունը և ուսումնառության արդյունքների ճանաչումը, որն արձագանքում է ուսումնառուների ձգտումներին և ուսումնառության կարիքներին հասարակության ու տնտեսության կարիքների և պահանջների համատեքստում:

Պահանջվում է գործընկերություն Եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում՝ կատարելագործելու մեծահասակների ուսումնառության հատվածի արդյունավետությունը, ընդլայնելու և հեշտացնելու մուտքի հնարավորությունն ու համապատասխան ֆինանսավորումը[10]:

---

9 ESF060603-ESF Աջակցություն Կրթության և Ուսուցման վերաբերյալ Փաստաթղթին

10 Օժանդակում մեծահասակների ուսումնառությանը, OECD (ՏՀԶԿ), 2005, ISBN - 9264010939

2.1 Քաղաքականություն

Խորհրդատվությունը վերահաստատեց պետական *իրավասու մարմինների և շահագրգիռ այլ կողմերի* միջամտությունը՝ երաշխավորելու, որ ուսումնառության հնարավորություններն իրենցից վտանգ ներկայացնող անձանց առանցքային կարողություններ ձեռք բերելու հնարավորություն են տալիս[11]: Այս միջամտությունն անհրաժեշտ է՝ երաշխավորելու, որ այն մեծահասակները, ովքեր ավարտել են դպրոցն առանց համապատասխան ֆորմալ որակավորումների և ցանկանում են կյանքի ցանկացած ժամանակահատվածում վերսկսել կամ շարունակել իրենց հիմնական կրթությունը, աջակցություն են ստանում ուսումնառության համապատասխան և նոր ուղիներով ու հնարավորություններով՝ ձեռք բերելու կարողություններ աշխատանքին համընթաց ուսուցման միջոցով: Այս հատվածում հաջողության հասնելու համար այսպիսի միջամտության կարիքը նույնիսկ ավելի մեծ է աշխատավայրի և հմտությունների փոփոխմանն ուղղված արագ քայլերի համատեքստում:

Շահագրգիռ կողմերը հանգել են այն եզրկացության, որ, համեմատած ուսումնառության այլ ոլորտների հետ, մեծահասակների ուսումնառության հատվածի օժանդակությունն ու շահեկանությունը լավ չեն հետազոտվել, քննարկվել կամ լուսաբանվել: Նույնիսկ ավելին, մեծահասակների ուսումնառության հնարավորությունների զարգացումը համընթաց չէ անհատների և հասարակության կարիքներին:

Մասնակցությունը մեծացնելու և ներդրումները խթանելու համար խիստ անհրաժեշտ է, որ մեծահասակների ուսումնառության որակը, համապատասխանությունն ու արդյունավետությունը[12] հստակորեն տեսանելի լինեն:

Իշխանությունները և շահագրգիռ կողմերը, իրենց համապատասխան բնագավառներում, պետք է գործեն՝ հեշտացնելու մուտքի հնարավորությունը, ապահովելու ուղղորդում և գնահատում, ինչպես նաև արագացնելու ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառությամբ ձեռք բերված ուսումնառության արդյունքների վավերացումն ու ճանաչումը:

2.2 Ղեկավարում

Խորհրդատվության աջակիցներին ավելի քան պարզ էր, որ մեծահասակների ուսումնառություն ապահովողների լավ ղեկավարումը նպաստում է մեծահասակների արդյունավետ ուսումնառությանը: Վերջինս իր հերթին հանգեցնում է ուսումնառուների

---

11 Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2006թ. դեկտեմբերի 18-ի առաջարկը ցկյանս ուսումնառության առանցքային հմտությունների վերաբերյալ, (2006/962/EC), OJ L 394/10, 30.12.2006

12 Հանձնաժողովի զեկույցը՝ «Եվրոպական կրթության և ուսուցման համակարգերի արդյունավետություն և անաչառություն», COM(2006) 481 վերջնական, 8.09.2006, http://ec.europa.eu/education/policies/2010/doc/comm481_en.pdf

որակյալ ուսումնառության արդյունքների և շահագրգիռ կողմերի ներդրումների լավ շահույթների:

Մեծահասակների ուսումնառություն ապահովողների լավ ղեկավարումը բնորոշվում է.

- կենտրոնացում մեծահասակ ուսումնառուի վրա,
- նորարարական մոտեցում ուսումնառությանը,
- կարիքների արդյունավետ վերլուծություն,
- գործերի կառավարման արդյունավետ համակարգեր և ռեսուրսների ճշգրիտ բաշխում,
- արհեստավարժ անձնակազմ,
- ապահովողների որակի ապահովման մեխանիզմներ,
- փաստերի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման համակարգեր ազգային շրջանակներում,
- սերտ հարաբերություններ կրթական այլ ոլորտների և մարմինների հետ, ինչպիսիք են ուսումնառուի կազմակերպությունը, ճյուղային ասոցիացիաները և հատվածային հաստատությունները: Քանի որ գործատուներն աշխատանքի վրա հիմնված ուսուցման ու աջակից միջավայրի ապահովման միջոցով մեծահասակներին ապահովում են ուսուցման մեծ չափաբաժնով, հետևաբար գործատուի ներգրավումը տեղական և տարածաշրջանային պլանավորման մակարդակներում ունի կենսական անհրաժեշտություն:

Ուսումնառության բոլոր մակարդակներում /ֆորմալ և ինֆորմալ/ ու տարրերում նախագծված և սիստեմատիկ մոտեցման կարիք կա[13]՝ կատարելագործելու հաշվետարությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև պաշտպանելու այն համոզմունքը, որ մեծահասակների ուսումնառությունը կբավարարի շահագրգիռ բոլոր կողմերի, հատկապես մեծահասակ ուսումնառուների պահանջները:

2.3 Մատուցում

Խորհրդակցությունը ցույց տվեց, որ մեծահասակների ուսումնառության գլխավոր մարտահրավերն այնպիսի ծառայության մատուցումն է, որը միաժամանակ բավարարում է մեծահասակ ուսումնառուի, աշխատաշուկայի և հասարակության կարիքներին, ինչպես նաև ստեղծում է հետագա պահանջարկը: Բացի այդ, հարկավոր է միջկապակցված գործողությունների մի մեծ շարք՝ հաղթահարելու մասնակցության արգելապատնեշը: Սա ներառում է.

- բարձրորակ տեղեկատվության և ուղղորդման ավելի սերտորեն կապակցում ուսումնառուին, որը կարելի է ձեռք բերել հանրության կամ աշխատավայրի վրա

[13] Սահմանումների համար տե՛ս «Ցկյանս Ուսումնառության Հուշագիրը» (SEC(2000) 1832, 30.10.2000 և հետագա աշխատանքը՝ որպես Eurostat-ի կողմից Ուսումնառության Գործողությունների Դասակարգում

հիմնված ծառայությունների միջոցով: Ընդհանուր համաձայնության են եկել, որ սույն գործողության պլանի թիրախային խմբերի համար սա պետք է ապահովվի անվճար,

- ուսումնառության ավելի սերտորեն կապակցումն իրենց համայնքների և աշխատավայրերի ուսումնառուներին: Սա կարելի է ձեռք բերել ուսումնառության տեղական կենտրոնների, ոչ հասարակական կազմակերպությունների, աշխատավայրում ուսումնառության և էլեկտրոնային /հեռավար/ ուսումնառության միջոցով: Ուսումնառության այլընտրանքային հնարավորություններ պետք է առաջարկվեն, որոնք արձագանքում են անհատների ուրույն կարիքներին,
- գնահատման, վավերացման և ուսումնառության արդյունքների ճանաչման մուտքի ճկուն հնարավորության ընձեռում, որը տանում է վկայագրման և որակավորման.
- բարձրագույն կրթության մուտքի հնարավորության ընդլայնում[14]՝ հեշտացնելու «մեկ աստիճան բարձր» որակավորման ձեռքբերումը, պահանջարկից բխող ֆինանսական մեխանիզմների ստեղծում /ինչպիսիք են անհատական ուսումնառության հաշիվներ, պետության կամ պետական երաշխավորման մեխանիզմների միջոցով տրամադրվող հարկեր և վարկեր/՝ արձագանքելու ֆինանսական ճնշումներին և ուսումնառությունը կազմակերպելու ողջ դասընթացին մասնակցելու կամ մասնաժամանակյա ուսումնառության հիման վրա,
- քաջալերում անհատներին՝ ներդնելու իրենց սեփական ուսումնառությունում և՛ անձնական գոհունակության, և՛ զբաղվածության համար: Այս առումով, մեծահասակների ուսումնառությունը հզոր մեխանիզմ է լեզվի ուսուցման համար՝ համաձայն Հանձնաժողովի՝ Լեզվի Ուսուցմանն ու Լեզվաբանական Բազմազանությանն օժանդակելու վերաբերյալ 2004-2006թթ. գործողության պլանում սահմանած ռազմավարության[15]: Ուղղորդումն ունի առանցքային դերակատարություն՝ օգնելու մեծահասակներին օգուտ քաղել ընկերությունների, սոցիալական ծառայությունների և այլ հաստատությունների կողմից առաջարկված հնարավորություններից:

---

[14] Flash Eurobarometer 192: ԵՄ համալսարաններում աշխատող դասավանդող մասնագետների 87%-ը համաձայն է, որ մեծահասակ ուսումնառուների համար համալսարաններ պետք է հիմնվեն

[15] Հանձնաժողովի զեկույցը Խորհրդին, Եվրոպական Կառավարությանը, Եվրոպական Տնտեսական ու Սոցիալական Կոմիտեին և Տարածաշրջանների Կոմիտեին՝ Օժանդակում Լեզվի Ուսուցմանը և Լեզվաբանության Բազմազանությանը, Գործողության Պլան 2004-2006, http://ec.europa.eu/education/doc/official/keydoc/actlang/act_lang_en.pdf

3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

2006թ. զեկույցի առանցքային մարտահրավերներն իրագործելու համար /վերջին խորհրդակցության ընթացքում հավաքագրված տեսակետների հիման վրա/ Հանձնաժողովը հրավիրում է անդամ պետություններին՝ մասնակցելու Եվրոպական Գործողության Պլանի հետևյալ հատվածներին.

- վերլուծել անդամ պետությունների մեծահասակների ուսումնառության կրթության և ուսուցման բոլոր հատվածների բարեփոխումների արդյունքները,
- կատարելագործել մեծահասակների ուսումնառության հատվածի ապահովման որակը,
- մեծացնել մեծահասակների հնարավորությունները՝ շարժվելու «մի քայլ առաջ» և ստանալու նախկինից առնվազն մեկ աստիճան բարձր որակավորում,
- արագացնել հմտությունների և սոցիալական կարողությունների գնահատման գործընթացը, ինչպես նաև վավերացնել ու ճանաչել դրանք ուսումնառության արդյունքների հիման վրա,
- կատարելագործել մեծահասակների ուսումնառության հատվածի մշտադիտարկումը:

Այսպիսի գործողությունների իրագործմանը կարելի է աջակցել Եվրոպական Սոցիալական Հիմնադրամի և Ցկյանս Ուսումնառության Ծրագրի կիրառման միջոցով:

3.1. Վերլուծել անդամ պետությունների մեծահասակների ուսումնառության կրթության և ուսուցման բոլոր հատվածների բարեփոխումների արդյունքները

Մեծահասակների ուսումնառությունն առնչվում է կրթության մնացած բոլոր հատվածների հետ: Ուստի, կարևոր է վերլուծել զարգացումների արդյունքները կրթության այլ հատվածներում՝ և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ, ինչպես նաև նրանց փոխազդեցությունը մեծահասակների ուսումնառության զարգացումների վրա: Անդամ շատ պետություններ մշակում են Որակավորումների Ազգային Շրջանակ, որը կապակցվում է Որակավորումների Եվրոպական Շրջանակի հետ: Կրեդիտների փոխանցման վերաբերյալ քննարկումները նույնպես ընթացքի մեջ են: Աշխատանքը կենտրոնանում է նրա վրա, թե ինչպես հեշտացնել մուտքի հնարավորությունը, առաջընթացը և փոխանցումը. հետևաբար, այն ունի առանցքային կարևորություն՝ բացելու որակավորումների համակարգերը մեծահասակների համար ևս: Որակի ապահովումը կրթության և ուսուցման ոլորտի բարեփոխումների էական մասն է կազմում: Մեծահասակների ուսումնառության հատվածի զարգացումները պետք է ուղղորդվեն կրթության և ուսուցման արդիականացման շարունակական գործընթաց: Անդամ որոշ պետություններում մեծահասակների ուսումնառությունը ներառված է բարեփոխումների ծրագրի մեջ, իսկ անդամ մնացած երկրներում՝ ոչ:

2008	Մեծահասակների ուսումնառության հատվածի ազգային բարեփոխումների ենթատեքստի վերլուծությունը քննության կենթարկվի առկա ազգային հաշվետվության մեխանիզմների հիման վրա: Սույն վերլուծությունը կներառի այս բարեփոխումների ծախսերի/շահույթների վերլուծությունը՝ ճշմարտացիորեն գնահատելու լավագույն փորձերը: Եթե անհրաժեշտություն լինի, հավելյալ ուսումնասիրություն կձեռնարկվի:
2009	Վերլուծության արդյունքները կզեկուցվեն՝ ցույց տալով միտումները, ձեռքբերումներն ու թերություններն Եվրոպական և ազգային մակարդակներով: Սա կխթանի Ցկյանս Ուսումնառության Ծրագրի և ԵՄ համապատասխան այլ նախաձեռնությունների մշակումը:
2010	Հանձնաժողովն արձանագրություն կկազմի առաջընթացի վերաբերյալ, և դա շարունակական բնույթ կկրի 2010թ. հետո ամեն երկու տարին մեկ:

3.2. Կատարելագործել մեծահասակների ուսումնառության հատվածի ապահովման որակը

Ապահովման որակն արտացոլում են քաղաքականությունը, ռեսուրսները և այլ գործոններ, սակայն հիմնական գործոնն ապահովման մեջ ներգրավված անձնակազմի որակն է: Մինչ այժմ անդամ շատ պետություններում քիչ ուշադրություն են դարձրել մեծահասակների ուսումնառության անձնակազմի ուսուցմանը /նախնական և շարունակական/, կարգավիճակին և աշխատավարձին: Այս համատեքստում մեծահասակների ուսումնառության անձնակազմը սահմանափակում չի դնում ուսուցիչների և դասընթացավարների առջև, սակայն ներառում է կառավարման, ուղղորդման անձնակազմ, դաստիարակներ և վարչական անձնակազմ: Նրանք պետք է կարողանան արձագանքել հատուկ խմբերի տարբեր կարիքներին: Անձնակազմի որակն ունի առանցքային կարևորություն՝ խթանելու մեծահասակ ուսումնառուներին մասնակցել ուսումնառությանը:

2008	Կհրատարակվեն *Եվրոպայում մեծահասակների ուսումնառության մասնագիտությունների* ուսումնասիրության արդյունքները: Սա կորոշարկի անդամ պետությունների առկա լավագույն փորձը և կձևակերպի առաջարկները: Որոշարկված լավագույն փորձը տարածում կգտնի «Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի և Ցկյանս Ուսումնառության Ծրագրի միջոցով:
2009	Մեծահասակների ուսումնառության մասնագիտությունների չափորոշիչների մշակում՝ ներառյալ առկա լավագույն փորձի վրա հիմնված ուղղորդման ծառայությունները:
2010	Ապահովողների և նրանց լիազորման որակի չափորոշիչների մշակման հետագա հետազոտություն: Սա նույնպես կնպաստի հատվածի մշտադիտարկմանը:

3.3. Մեծացնել մեծահասակների հնարավորությունները՝ շարժվելու «մի քայլ առաջ» և ստանալու նախկինից առնվազն մեկ աստիճան բարձր որակավորում

Եվրոպայի ազգագրական պրոեկցիան ինքնին թելադրում է, որ ներդրումներն որոշարկված թիրախային խմբերի մարդկային և սոցիալական կապիտալում ունեն կենսական անհրաժեշտություն, որի բացակայությունը հանգեցնում է աշխատուժի կրճատումների և աշխատաշուկայի թերությունների: Տեղեկատվությունը և ուղղորդումն ունեն ծայրահեղ կարևոր դերակատարություն՝ խթանելու այս խմբերին: Տեղեկատվական միջոցների դերակատարությունը դժվար հասանելի խմբերին արձագանքելու գործում պետք է հաշվի առնել: Սակայն սա բավարար չէ՝ պարզապես ներգրավելու մարդկանց կրթության և ուսուցման համակարգի մեջ: Նրանց որակավորումների մակարդակները բարձրացնելու և առաջխաղացման հնարավորությունները պետք է իրատեսական լինեն և հնարավորության տան՝ ավելի արագ ինտեգրվելու կյանքի բոլոր բնագավառներին:

Անդամ պետությունները պետք է ուսումնասիրեն թիրախային բնակչության հմտությունների մակարդակը բարձրացնող ազգային թիրախներ սահմանելու հնարավորությունը:

2008	Ստեղծել լավագույն փորձի և ծրագրերի ցանկ՝ հասնելու որոշարկված թիրախային խմբերին՝ նրանց տալով առաջադիմելու և հաջողության հասնելու հնարավորություն, ինչպես նաև կենտրոնանալով աշխատաշուկային, կրթությանն ու ուսուցմանը, հասարակությանը /կամավոր աշխատանք/ վերահնտեգրվելու առանցքային գործոնների որոշարկման վրա: Ցկյանս Ուսումնառության Ծրագրի, հատկապես Grundtvig-ի արդյունքները ևս հաշվի կառնվեն:
2009	Հիմնվելով հետազոտությունների ցանկի արդյունքների վրա /2008/՝ Ցկյանս Ուսումնառության Ծրագրում թիրախային խմբերին հասնելու և հետագա ուսումնասիրության թռիչքային ծրագրեր մշակելու առաջարկների կոչ կլինի՝ հասնելու մի աստիճան բարձր որակավորման:
2010	Ծրագրերի մեկնարկն ու արդյունքների մշտադիտարկումը կսկսվեն միաժամանակ: Անդամ պետությունները պետք է թիրախային խմբերի հմտությունների մակարդակների բարձրացման առաջընթացի վերաբերյալ զեկուցեն Կրթության և Ուսուցման Առաջընթացի Համատեղ Զեկույցում:

3.4. Արագացնել թերի ընդունակ խմբերի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գնահատման և ճանաչման գործընթացը

Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչումն ու վավերացումը ցկյանս ուսումնառության ռազմավարության կորիզն են կազմում: Անդամ շատ պետություններ ունեն օրինական շրջանակ, իսկ նրանցից շատերը գործի են դրել թռիչքային ծրագրեր:

Հմտությունների և սոցիալական կարողությունների գնահատումն ու ճանաչումը, անկախ նրանից, թե որտեղ և ինչպես են ձեռք բերվել, հատկապես կարևոր են բազային որակավորումներ չունեցող անձնաց համար՝ հեշտացնելու նրանց ինտեգրումը հասարակությանը: Նրանք կունենան հմտություններ, որոնք տեսանելի չեն: Սա շատ կարևոր հիմնախնդիր է շահագրգիռ բոլոր կողմերի /գործատուներ, կառավարություններ, անհատներ և այլն/ համար, քանի որ ապացուցված է, որ ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակով ձեռք բերված հմտությունների ճանաչումը կարող է հանգեցնել ժամանակի և գումարի էական խնայումների: Հետևաբար, անհրաժեշտ է, որ կառավարություններն ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչմանը դրական մոտեցում ցուցաբերեն: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերաբնակիչների կարողությունների վավերացմանն ու ճանաչմանը՝ չունենալով ոչ մի նախապաշարմունք մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալ ԵՄ օրենքի նկատմամբ[16]:

2008	Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչման և վավերացման լավագույն փորձի որոշարկում՝ հատկապես կենտրոնանալով սոցիալական կարողությունների վրա, որոնք ձեռք են բերվում հիմնականում ֆորմալ ուսումնառության համակարգից դուրս:
2009	Հավասար ուսումնառություն Եվրոպական մակարդակում, լավագույն փորձի և անձնակազմի փոխանակում: Սա կֆինանսավորվի Ցկյանս Ուսումնառության Ծրագրի կողմից:
2010	Արդյունքների առաջին զեկույցը քննարկման կներկայացվի սեմինարում, իսկ արդյունքները կտրամադրվեն շահագրգիռ բոլոր կողմերին:

3.5. Կատարելագործել մեծահասակների ուսումնառության հատվածի մշտադիտարկումը

Ինչպես արդեն նշվել է մեծահասակների ուսումնառության վերաբերյալ զեկույցում՝ *Սովորելու համար երբեք ուշ չէ,* մեծահասակների ուսումնառության շահեկանությունն ի ցույց չդնելը հատվածի գլխավոր թերությունն է: Մեկ ընդհանուր լեզվի և ընդհանուր ըմբռնման հրատապ անհրաժեշտություն կա՝ հաղթահարելու այս հատվածի համեմատական տվյալների բացակայությունն ու թերըմբռնումը: Այս հատվածի զարգացումների

[16] Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2005թ. սեպտեմբերի 7-ի 2005/36/EC հրահանգ մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալ, OJ L 255/22, 30.9.2005

պարբերաբար նորացման համար /երկու տարին մեկ/ պահաջվում է առնվազն առանցքային տվյալների բազա:

Այս գործողությունը սերտորեն կապակցված կլինի ցուցիչների ու նշածողերի շարունակական զարգացման և աշխատանքի հետ[17]՝ ներառյալ Նշածողերի և Ցուցիչների Մշտական Խմբի համար կատարված աշխատանքը:

2008	Հիմնվելով հանձնաժողովի մեկնարկած ուսումնասիրության վրա՝ կայուն տերմինաբանության առաջարկ պետք է համաձայնեցվի անդամ պետությունների և շահագրգիռ անձանց կողմից: Ուսումնասիրության նպատակը նաև առանցքային տվյալների բազայի վերաբերյալ առաջարկն է՝ հեշտացնելու հատվածի երկամյա պարբերականությամբ մշտադիտարկումը:
2009	Համաձայնեցված տերմինաբանության բառարան կմշակվի և կթողարկվի: Առանցքային տվյալների հավաքագրում կսկսվի անդամ այն պետություններում, որոնք մասնակցության ցանկություն կունենան:
2010	Արդյունքները կհրատարակվեն «Կրթություն և Ուսուցում 2010» Առաջընթացի Համատեղ Զեկույցում:

4. ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԻ ԱՊԱԳԱՆ

Ժամանակն է երաշխավորել մեծահասակների ուսումնառության տեղը ցկյանս ուսումնառությունում և ապահովել նրա դերակատարությունը քաղաքականության մշակման բոլոր մակարդակներում, որպեսզի նրա օժանդակությունը՝ արձագանքելու Եվրոպայի մարտահրավերներին, շոշափելի լինի:

2007թ. վերջին աշխատանքային խումբ կստեղծվի՝ աջակցելու Հանձնաժողովին և անդամ պետություններին մանրամասնել սույն գործողության պլանի ներքո սահմանված գործողություններն ու ծրագրերը, ինչպես նաև հանձն առնել դրանց հետագա իրագործումը: Խորհուրդն ու Կառավարությունը հրավիրվել են՝ հաստատելու գործողության պլանը:

2009թ. երկրորդ կեսին տեղի կունենա համագումար՝ զեկուցելու ձեռք բերված արդյունքների մասին և քննարկելու հետագա աշխատանքները:

[17] Ցուցիչների և նշածողերի կապակցված շրջանակ՝ մշտադիտարկելու կրթության և ուսուցման ոլորտում Լիսաբոնի նպատակներին ուղղված առաջընթացը, COM (2007)61 վերջնական:

ՀԱՎԵԼՎԱԾ. ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

(1) **Փորձագետների խմբի 4 հանդիպում Բրյուսելում** Եվրոպական Հանձնաժողովի ծառայությունների (DG EMPL, DG ENTR, DG JLS), սոցիալական գործընկերների (ETUC, EuroBusiness), միջազգային կազմակերպությունների (OECD, UNESCO) ներկայացուցիչների, շահագրգիռ կողմերի, «չորս տարածաշրջանները» ներկայացնող փորձագետների և Մեծահասակների Ուսումնառության Եվրոպական Ասոցիացիայի ներկայացուցչի մասնակցությամբ:

(2) **Խորհրդակցական 4 վերազգային հանդիպում անդամ պետությունների, ԵՏՏ երկրների և Թուրքիայի հետ** կրթության և զբաղվածության նախարարությունների, սոցիալական գործընկերների ու շահագրգիռ այլ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

- Հելսինկի, 2007թ. փետրվարի 22-23, Հրավիրված երկրներ՝ Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Իսլանդիա, Լատվիա, Լիտվա, Նորվեգիա, Շվեդիա
- Բոնն, 2007թ. մարտի 12-13, Հրավիրված երկրներ՝ Բելգիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իռլանդիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդներ, Միացյալ Թագավորություն
- Լյուբլյանա, 2007թ. մարտի 26-27, Հրավիրված երկրներ՝ Ավստրիա, Բուլղարիա, Չեխիայի Հանրապետություն, Հունգարիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա
- Լիսաբոն, 2007թ. ապրիլի 3-4, Հրավիրված երկրներ՝ Կիպրոս, Հունաստան, Իտալիա, Մալթա, Պորտուգալիա, Իսպանիա, Թուրքիա

(3) **Բարձր մակարդակի խորհրդակցություն անդամ պետությունների ներկայացուցիչների հետ**

- Հեյդելբերգ, 2007թ. մարտի 1-2 Նախարարական ինֆորմալ հանդիպում
- Համբուրգ, 2007թ. մայիսի 22-23 Մասնագիտական Ուսուցման Գլխավոր Տնօրենների (DGVT) հանդիպում
- Բրյուսել, 2007թ. հունիսի 14-15 Մասնագիտական Ուսուցման Խորհրդակցական Կոմիտեի (ACVT) հանդիպում

(4) **Ինֆորմալ խորհրդակցություն անդամ պետությունների և շահագրգիռ այլ կողմերի հետ**

- Անդամ պետությունների, ԵՏՏ երկրների և Թուրքիայի պետական իրավասու մարմինները հրավիրվեցին՝ գումարելու ազգային խորհրդակցություն շահագրգիռ համապատասխան կողմերի հետ 2007թ. ապրիլի 26-ից մայիսի 22-ը:
- Հետագա ինֆորմալ խորհրդակցություն բոլոր միջոցառումների վերաբերյալ /սոցիալական գործընկերների հանդիպում, մեծահասակների ուսումնառության վերաբերյալ համագումարներ և հանդիպումներ կլոր սեղանի մոտ/: